ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրի մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը, որը գտնվում է Կառավարական տուն 3 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների «Օբյեկտների անձնագրերի կազմման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-26/24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասին տեղեկատվությունը՝

	Գնման առարկայի							
չափա-բաժնի համարը	անվանումը	Չափման միավորը	քանակը[1]		նախահաշվային գինը /ՀՀ դրամ/		համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)	պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)
			առկա ֆինանսական միջոցներով[2]	ընդհանուր	առկա ֆինանսական միջոցներով[3]	ընդհանուր		
1.	Օբյեկտների անձնագրերի կազմման ծառայություններ	դրամ	1	1	գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով	1 000 000	Օբյեկտների անձնագրերի կազմման ծառայություններ՝ ըստ աղյուսակի	Օբյեկտների անձնագրերի կազմման ծառայություններ՝ ըստ աղյուսակի

Կիրառված գնման ընթացակարգը և դրա ընտրության հիմնավորումը	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետ

Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը		25.05.2026թ.	
Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը[4]	1	-	
Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը		**Հարցարդման ստացման**	**Պարզաբանման**
	1		

Հ/Հ	**Մասնակիցների անվանումները**	**Յուրաքանչյուր մասնակցի հայտով, ներառյալ միաժամանակյա բանակցությունների կազմակերպման արդյունքում ներկայացված գինը /ՀՀ դրամ5**					
		ՀՀ դրամ[6]					
		Գինն առանց ԱԱՀ		**ԱԱՀ**		**Ընդհանուր**	
Չափաբաժին 1							
1	«Էդգար Արարատի Թամազյան» Ա/Ձ	999995	999995	-	-	989995	989995
2	«Հար Գրուպ 5» ՍՊԸ	9875450	9875450	1975090	1975090	11850540	11850540

Տվյալներ մերժված հայտերի մասին

Չափաբաժնի համարը	**Մասնակցի անվանումը**	Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար)			
		Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը	**Հայտով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին**	**Առաջարկած գնման առարկայի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին**	**Գնային առաջարկ**

Այլ տեղեկություններ	**Ծանոթություն՝** Հայտերի մերժման այլ հիմքեր:

Ընտրված մասնակցի որոշման ամսաթիվը	08.06.2026թ.	
Անգործության ժամկետ	**Անգործության ժամկետի սկիզբ**	**Անգործության ժամկետի ավարտ**
	09.06.2026թ.	18.06.2026թ.
Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման ամսաթիվը	24.06.2026թ.	
Ընտրված մասնակցի կողմից ստորագրված պայմանագիրը պատվիրատուի մոտ մուտքագրվելու ամսաթիվը	26.06.2026թ.	
Պատվիրատուի կողմից պայմանագրի ստորագրման ամսաթիվը	30.06.2026թ.	

Չափա-բաժնի համարը	**Ընտրված մասնակիցը**	**Պայմանագրի**					
		Պայմանագրի համարը	**Կնքման ամսաթիվը**	**Կատարման վերջնա-ժամկետը**	**Կանխա-վճարի չափը**	**Գինը ՀՀ դրամ**	
						Առկա ֆինանսական միջոցներով	**Ընդհանուր[7]**

---

1 Լրացվում է կնքված պայմանագրով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը

2 Լրացնել փվյալ պայմանագրի շրջանակներում առկա ֆինանսական միջոցներով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը, իսկ պայմանագրով նախատեսված ընդհանուր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

3 Եթե փվյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնել առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնել կողքի՝ «ընդհանուր» սյունակում:

4 Նշվում են հրավերում կատարված բոլոր փոփոխությունների ամսաթվերը:

5 Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գները լրացնել փվյալ հրավերով սահմանած փոխարժեքով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

6 Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գները լրացնել փվյալ հրավերով սահմանած փոխարժեքով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

7 Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել «Ընդհանուր» սյունակում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով՝ «Առկա ֆինանսական միջոցներով» սյունակում:

1	«Էդգար Արարատի Թամազյան» Ա/Ձ	ՇՄՆ-ԷԱՃ-ԾՁԲ-26/24	30.06.2026թ.	25.12.2026թ		**989 995**	**989 995**

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն

Չափա-բաժնի համարը	Ընտրված մասնակիցը	Հասցե, հեռ.	Էլ.-փոստ	Բանկային հաշիվը	ՀՎՀՀ[8] / Անձնագրի համարը և սերիան
1	«Էդգար Արարատի Թամազյան» Ա/Ձ	ՀՀ Տավուշի մարզ, գ.Կողբ փ. 2, տ. 29	edgartamazyan86@gmail.com	2476805216780000	71066975

Այլ տեղեկություններ	Ծանոթություն՝ Որևէ չափաբաժնի չկայացման դեպքում պատվիրատուն պարտավոր է լրացնել տեղեկություններ չկայացման վերաբերյալ:

Ինչպես սույն ընթացակարգի տվյալ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք, կարող են ընթացակարգը կազմակերպած պատվիրատուին **ներկայացնել «Էդգար Արարատի Թամազյան» Ա/Ձ-ի հետ կնքված պայմանագրի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ՝ սույն հայտա**րարությունը հրապարակվելուց հետո 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում:

Գրավոր պահանջին կից ներկայացվում է՝

1) ֆիզիկական անձին տրամադրված լիազորագրի բնօրինակը: Ընդ որում լիազորված՝

ա. ֆիզիկական անձանց քանակը չի կարող գերազանցել երկուսը.

բ. ֆիզիկական անձը անձամբ պետք է կատարի այն գործողությունները, որոնց համար լիազորված է.

2) ինչպես գործընթացին մասնակցելու պահանջ ներկայացրած, այնպես էլ լիազորված ֆիզիկական անձանց կողմից ստորագրված բնօրինակ հայտարարություններ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված շահերի բախման բացակայության մասին.

3) այն էլեկտրոնային փոստի հասցեները և հեռախոսահամարները, որոնց միջոցով պատվիրատուն կարող է կապ հաստատել պահանջը ներկայացրած անձի և վերջինիս կողմից լիազորված ֆիզիկական անձի հետ.

4) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունների և լրատվական գործունեություն իրականացնող անձանց դեպքում՝ նաև պետական գրանցման վկայականի պատճենը:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեն voskehat.grigoryan@env.am, gnumner@env.am,[9]

Մասնակիցների ներգրավման նպատակով <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները	«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացվել են բոլոր անհրաժեշտ տեղեկատվությունների հրապարակումները՝ www.armeps.am, www.gnumner.am, eauction.armeps.am
Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը	Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել
Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները	Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել
Այլ անհրաժեշտ տեղեկություններ	

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող

Անուն, Ազգանուն	Հեռախոս	Էլ. փոստի հասցեն
Շրջակա միջավայրի նախարարության ՖՏ վարչության բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին	***(011) 818 529***	gnumner@env.am,

Պատվիրատու՝ Շրջակա միջավայրի նախարարություն:

---

[8] Չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվարկային հաշիվ չունեցող անձը:

[9] Սույն կարգավորումը հանվում է հայտարարությունից, եթե կնքված պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

- Եթե կնքված պայմանագրի գինը գերազանցում է գնումների բազային միավորը և գնումը պարունակում է պետական գաղտնիք, ապա սույն կարգավորման առաջին նախադասությունը շարադրվում է հետևյալ բովանդակությամբ. «Գնման սույն ընթացակարգի փվյալ չափաբաժնին մասնակցելու իրավերի հիման վրա հայտ ներկայացրած մասնակիցները կարող են սույն հայտարարության մեջ նշված պատվիրատուին ներկայացնել կնքված պայմանագրի այդ չափաբաժնի արդյունքի ընդունման գործընթացին պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ մասնակցելու գրավոր պահանջ՝ սույն հայտարարությունը ուղարկվելուց հետո ------ օրացուցային օրվա ընթացքում:

- Սույն կարգավորմամբ սահմանվող ժամկետը չի կարող պակաս լինել 3 օրացուցային օրից:

Աղյուսակ

Տեխնիկական առաջադրանք

I. Իրավիճակի նկարագրություն

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը, որով սահմանվել է 233 բնության հուշարձանների ցանկը, որոնցից 107-ը դասակարգված են երկրաբանական, 88-ը՝ ջրաերկրաբանական, 17-ը՝ բնապատմական և 21-ը՝ կենսաբանական տիպաբանական խմբերում:

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի՝ բնության հուշարձանների պահպանության ռեժիմը սահմանվում է յուրաքանչյուր բնության հուշարձանի համար կազմված անձնագրով, որում համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի՝ ընդգրկվում է անվանումը և դասակարգումը, տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները, նկարագրությունը, չափագրությունը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն: Բնության հուշարձանների անձնագրավորման հիմնական նպատակը վերջիններիս սահմանների հստակեցման, հողի նկատմամբ՝ սեփականության իրավունքի պետական գրանցման, նպատակային և գործառնական նշանակության համապատասխանեցման, ինչպես նաև պահպանության և օգտագործման ռեժիմների առնձնահատկությունների սահմանումն է: Ներկայումս Որոշմամբ հաստատված 233 բնության հուշարձաններից դեռևս 32-ն ունեն հաստատված անձնագիր (ևս 1 բնության հուշարձանի անձնագրավորման ծառայություններն ընթացքի մեջ են):

Որոշմամբ հաստատված և դեռևս չանձնագրավորված բնության հուշարձանների ներկա վիճակի գնահատման, մասնավորապես՝ ժամանակի ընթացքում անթրոպոգեն կամ բնածին ազդեցության հետևանքով դրանց որակական հատկանիշների փոփոխության և բնութագրման հստակ տվյալների հավաքագրման անհրաժեշտությունից ելնելով՝ շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը, աշխատակարգը, գույքագրման ենթակա բնության հուշարձանների ցանկը և գույքագրման ակտի ձևը հաստատելու մասին» № 326-Լ հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատվել է բնության հուշարձանների գույքագրման միջգերատեսչական աշխատանքային խումբ (այսուհետ՝ աշխատանքային խումբ):

Համաձայն Հրամանով հաստատված աշխատակարգի՝ աշխատանքային խումբը յուրաքանչյուր մարզում գտնվող բնության հուշարձանի գույքագրման աշխատանքների ավարտից հետո կազմում է միջանկյալ հաշվետվություն, որում ներառվում է ամփոփ տեղեկատվություն ուսումնասիրությունների և վերլուծությունների վերաբերյալ:

Աշխատանքային խմբի կողմից իրականացված գույքագրման աշխատանքների արդյունքում՝ ներկայումս ավարտվել են Կոտայքի մարզում գտնվող և Որոշմամբ հաստատված բնության հուշարձանների գույքագրման աշխատանքները: Կոտայքի մարզում իրականացված գույքագրման աշխատանքների արդյունքում՝ աշխատանքային խմբի կողմից կազմվել է մարզում գտնվող բնության հուշարձանների ամփոփ հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն), որում առանձնացվել է բնության հուշարձանների 4 կարգավիճակ՝

- Պահպանվել է՝ բնության հուշարձանի իրական տեղադիրքը հայտնաբերվել է, ներկա վիճակը համապատասխանում է նկարագրին (դեռևս չի ենթարկվել մարդածին ազդեցության),
- Պահպանվել է մասնակի՝ բնության հուշարձանը տեղորոշվել է, ներկա վիճակը մասնակի է համապատասխանում նկարագրին (մասնակի ենթարկվել է մարդածին ազդեցության),
- Չի պահպանվել՝ բնության հուշարձանը տեղորոշվել է, ներկա վիճակը չի համապատասխանում նկարագրին (ենթարկվել է մարդածին ազդեցության),
- Չի տեղորոշվել՝ գույքագրման աշխատանքների իրականացման շրջանակներում՝ բնության հուշարձանը չի տեղորոշվել,

Վերոնշյալ կարգավիճակների առանձնացման հիմքում ընկած է բնության հուշարձանների՝ ժամանակի ընթացքում մարդածին կամ բնածին ազդեցությունների արդյունքում երկրաբանական և զբոսաշրջային արժեքների ամբողջական կամ մասնակի կորստի, Որոշմամբ սահմանված և փաստացի տեղադիրքների հաճախակի հանդիպող անհամապատասխանությունների հանգամանքը: Համաձայն Կոտայքի մարզում գույքագրման աշխատանքների արդյունքում կազմված ամփոփ հաշվետվության՝ մարզում Որոշմամբ հաստատված բնության հուծարձաններից պահպանվել է 14-ը, մասնակի է պահպանվել 11-ը, չի պահպանվել 2-ը և չի տեղորոշվել 4-ը: Հարկ է նշել, որ գույքագրման ախատանքների արդյունքում՝ պահպանված և մասնակի պահպանված 25 բնության հուշարձաններից 2-ը գտնվում են գործող բնության հատուկ պահպանվող տարածքներում և դրանց անձնագրավորում չի պահանջվում, իսկ 1-ի անձնագրավորման աշխատանքներն արդեն իսկ ընթացքի մեջ են: Գույքագրման աշխատանքների արդյունքում՝ պահպանված և մասնակի պահպանված բնության հուշարձանների տեղադիրքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ցանկում:

Ցանկ

Հ/Հ	Գույքագրված բնության հուշարձանի անվանումը	Պահպանվածությունն ըստ Հաշվետվության	Տեղադիրքը բնորոշող կետային կոորդինատային տվյալներ	
			X	Y
1	«Անանուն խզվածքներ»	պահպանվել է	8451052.7123	4463139.6651
2	«Թագավորանիստ» խարամային կոն	մասնակի է պահպանվել	8451542.9785	4462635.8727
3	«Թագավորանիստ» խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	մասնակի է պահպանվել	8451419.7690	4462659.7827
4	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	պահպանվել է	8470444.0011	4448441.1132
5	«Ձորաղբյուրի (մանգյուսի)» բրածո ֆլորա	մասնակի է պահպանվել	8471354.6100	4451260.2600
6	«Ավազան» աղբյուր	մասնակի է պահպանվել	8472796.9100	4458114.6400
7	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	պահպանվել է	8466148.9200	4469944.1300
8	«Ավազան» հրաբխային գմբեթ	մասնակի է պահպանվել	8467007.9600	4474926.4300
9	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	պահպանվել է	8468555.3600	4472148.6600
10	«Անանուն» օբսիդիանի ելքեր	պահպանվել է	8469272.3900	4469868.2000
11	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	պահպանվել է	8469765.8800	4479243.1100
12	«Ծակ քար» բնական թունել	պահպանվել է	8469972.8000	4480858.6300
13	«Անանուն» քարե կուտակումներ	պահպանվել է	8477021.8500	4482358.1800

14	«Հաղպրտանք» աղբյուր	պահպանվել է	8480450.1300	4487917.3300
15	«Ալպյան գորգ»	պահպանվել է մասնակի	8471150.2900	4505376.9900
16	«Ռելիկտային կրկես» Թեժսար լեռան մոտ	պահպանվել է	8464410.9500	4502910.5200
17	«Գութանասար» հրաբուխ	պահպանվել է մասնակի	8474602.4900	4471158.0300
18	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	պահպանվել է	8476584.5100	4470789.0200
19	«Բազմալիճք» լիճ	պահպանվել է	8490802.2100	4456477.4500
20	«Լուսնալիճ» լիճ	պահպանվել է մասնակի	8489754.5400	4459800.7800
21	«Վիշապա լիճ» լիճ	պահպանվել է մասնակի	8492176.5200	4446203.4500
22	«Սագերի լիճ» լիճ	պահպանվել է	8483182.6400	4451577.6400

II. <u>Հաշվետու ժամանակահատվածում իրականացման ենթակա գործառույթները</u>

2. Ելակետային տվյալների ուսումնասիրություն

Կիրառելով գույքագրված, պահպանված և մասնակի պահպանված և Որոշմամբ հաստատված 22 բնության հուշարձանների վերաբերյալ հասանելի տեղեկատվությունը՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ հավաքագրել հավելյալ տեղեկատվություն՝ օգտվելով գիտական գրականության աղբյուրներից: Իրականացնել նաև երկրաբանական և տոպոգրաֆիական քարտեզների ուսումնասիրություն:

3. Դաշտային ուսումնասիրություններ

3.1 Կիրառելով Հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվությունը և սույն տեխնիկական առաջադրանքի Աղյուսակ 1-ը դաշտային այցելությունների միջոցով, տեղում իրականացնել Որոշմամբ հաստատված բնության հուշարձանների երկրաբանական, ջրաերկրաբանական, բնապատմական և կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրման աշխատանքներ,

3.2 տեխնիկական առաջադրանքի 2-րդ և սույն կետի 3.1 ենթակետերով հավաքագրված տեղեկատվության, ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների հիման վրա, Որոշմամբ հաստատված յուրաքանչյուր բնության հուշարձանի համար կազմել մասնագիտորեն հիմնավորված առաջարկ՝ դրանց անձնագրավորման ենթակա կամ ոչ ենթակա լինելու կամ մասնակի / հատվածավորված (երկրատեղանքների կամ գեոսայթերի տեսքով) ենթակա լինելու վերաբերյալ՝ ներառելով համապատասխան թեմատիկ քարտեզագրական տեղեկատվություն,

3.4 որոշմամբ հաստատված և անձնագրավորման համար առանձնացված ցանկում «Անանուն» անվամբ բնության հուշարձաններին տալ մասնագիտորեն հիմնավորված անվանումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «ՀՀ աշխարհագրական անվանումների հաշվառման գրանցման պետական քարտադարանի ստեղծման և վարման» №502 որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան:

4. Տարածքների չափագրում

4.1 Հստակեցնել և չափագրել Որոշմամբ հաստատված բնության հուշարձանների տարածքները՝ անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով իրականացնել անձնագրավորման ենթակա բնության հուշարձանների դաշտային չափագրումներ սահմանազատելով դրանց երկրաբանական, ջրաերկրաբանական, բնապատմական կամ կենսաբանական տեսանկյունից հիմնավորված պահպանման գոտիները,

4.2 առանձնացված և սահմանազատված յուրաքանչյուր բնության հուշարձանի (կամ դրա երկրատեղանքների) զբաղեցրած տարածքները համաձայնեցնել ՀՀ կադաստրի կոմիտեի և համայնքի հետ, որի վարչական սահմաններում գտնվում է տվյալ բնության հուշարձանը կամ դրա երկրատեղանքները: Առանձնացնել մասնավոր սեփականության իրավունքով ծանրաբեռնված հողերից, ինչպես նաև հավաքագրել տեղեկատվություն՝ հողամասերի օգտագործման այլ սահմանափակումների վերաբերյալ (առկայության դեպքում),

4.3 սույն կետի 4.1 և 4.2 ենթակետերով սահմանված աշխատանքների արդյունքում՝ ճշգրտել և վերջնականացնել անձնագրավորման ենթակա բնության հուշարձանների տարածքների սահմանները՝ դրանցում բացառելով մասնավոր սեփականության իրավունքով ծանրաբեռնված հողամասերը և ընդգրկելով սեփականության իրավունքի պետական գրանցման, ինչպես նաև հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման ենթակա հողամասերը:

5. Հաշվետվության կազմում և ներկայացում

Հաշվետու ժամանակահատվածում բնության հուշարձանների անձնագրավորման աշխատանքների համակարգման, ընթացքի գնահատման, չափելիության և դրանց իրականցման ընթացքում մասնագիտական աջակցություն տրամադրելու նպատակով՝ անհրաժեշտ է սույն առաջադրանքի 8-րդ կետով սահմանված ժամանակահատվածներում շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել կատարվող աշխատանքների վերաբերյալ 3 հաշվետվություն՝ նախնական, միջանկյալ և ավարտական:

5.1 <u>Նախնական հաշվետություն.</u> կազմել և շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել, նախնական հաշվետվություն, որում պետք է ներառել.

ա) սույն տեխնիկական առաջադրանքի 2-րդ կետով իրականացված ելակետային ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ տեքստային և նկարագրական տեղեկատվություն,

բ) սույն տեխնիկական առաջադրանքի 3.2 կետով սահմանված առաջարկը,

գ) եզակի, գիտական, գիտաճանաչողական, բնապատկերային, պատմամշակութային և գեղագիտական առանձնահատուկ արժեքի տեսանկյունից, մասնագիտական հիմնավորմամբ անձնագրավորման ենթակա առանձնացված յուրաքանչյուր բնության հուշարձանների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, այդ թվում՝ թեմատիկ քարտեզագրական տեղեկատվություն, լուսանկարներ (արբանյակային կամ ԱԹՍ-ի միջոցով իրականացված), որում արտացոլված կլինեն անձնագրավորման ենթակա բնության հուշարձանների կամ դրանց երկրատեղանքների (գեոսայթերի) և պահպանման գոտու սահմանները,

դ) «Անանուն» անվամբ բնության հուշարձանների դեպքում՝ դրանց համար առաջարկվող մասնագիտորեն հիմնավորված անվանումների վերաբերյալ:

5.2 <u>Միջանկյալ հաշվետություն</u>. կազմել և շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել միջանկյալ հաշվետվություն, որում անհրաժեշտ է ներառել.

ա) սույն կետի 4-րդ կետով իրականացված աշխատանքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, այդ թվում՝ անձնագրավորման ենթակա յուրաքանչյուր բնության հուշարձանների սահմանազատված տարածքների, դրանցում մասնավոր սեփականության իրավունքով ծանրաբեռնված հողամասերի՝ կադաստրի կոմիտեի և համայնքների (որի վարչական սահմաններում գտնվում է տվյալ բնության հուշարձանը) հետ համաձայնեցման աշխատանքների վերաբերյալ տեքստային և նկարագրական տեղեկատվություն,

բ) անձնագրավորման ենթակա յուրաքանչյուր բնության հուշարձանների՝ կադաստրի կոմիտեի և համայնքների (որի վարչական սահմաններում գտնվում է տվյալ բնության հուշարձանը) հետ համաձայնացված և ճշգրտված սահմանների վերաբերյալ տեքստային և նկարագրական տեղեկատվություն, այդ թվում քարտեզագրական, ներկայացնելով նաև սահմանների վերաբերյալ կոորդինատային տվյալներ (կամ էլեկտրոնային տարածական տվյալներ «.shp» ձևաչափով),

III. Ակնկալվող արդյունքները

6. Ավարտական հաշվետվություն. կազմել և շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել ավարտական հաշվետվություն, որում անհրաժեշտ է ներառել.

6.1 բնության հուշարձանների անձնագրերի նախագծերի կազմման աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեքստային և նկարագրական տեղեկատվություն,

6.2 կադաստրի կոմիտեի և համապատասխան համայնքների հետ համաձայնեցված բնության հուշարձաններ անձնագրերի նախագծերի փաթեթ, որում յուրաքանչյուր բնության հուշարձանի անձնագրի նախագծում համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի՝ պետք է ներառել.

- անվանումը և դասակարգումը,
- տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները (բնության հուշարձանը երկրատեղանքների տեսքով ներկայացնելու դեպքում՝ յուրաքանչյուր երկրատեղանքի համար),
- նկարագրությունը, չափագրությունը և վիճակը (բնության հուշարձանը երկրատեղանքների տեսքով ներկայացնելու դեպքում՝ յուրաքանչյուր երկրատեղանքի համար),
- սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը (բնության հուշարձանը երկրատեղանքների տեսքով ներկայացնելու դեպքում՝ յուրաքանչյուր երկրատեղանքի համար),
- տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին,
- պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները,
- տվյալներ պահպանություն իրականացնող սուբյեկտի մասին,

6.3 բնության հուշարձանների անձնագրերի նախագծերը կազմել համաձայն Աղյուսակով սահմանված կառուցվածքային տիպաբանական ձևերի:

Աղյուսակ

Առանց երկրատեղանքների ներկայացված բնության հուշարձանի դեպքում

ԱՆՁՆԱԳԻՐ

«_____» ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ

1. **Անվանումը և Դասակարգումը՝**
   Տիպը՝_____, Ենթատիպը՝_____,

2. **Տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները** - կետում ներառվում է տեքստային մաս և բնության հուշարձանի պահպանման գոտու կետային կոորդինատային տվյալների աղյուսակ (կոորդինատային համակարգը WGS-84 ArmRef02),
3. **Նկարագրությունը չափագրությունը և վիճակը** - կետում ներառվում է տեքստային մաս՝ բնության հուշարձանի վերաբերյալ մանրամասն նկարագրությամբ,
4. **Սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը** – կետում ներառվում է հակիրճ տեքստային մաս՝ սահմանների և պահպանման գոտու մակերեսի վերաբերյալ, ինչպես նաև 2 քարտեզ.
   - բուն երկրատեղանքի զբաղեցրած տարածքի և դրա պահպանման գոտու նկարագրությամբ քարտեզ-հատակագիծ, որի պայմանական նշաններ դաշտում պետք է ներառել նաև վերջինիս պահպանման գոտու մակերեսը արտահայտված հեկտարով, ինչպես նաև սահմանների ընդհանուր երկարությունը մետրով արտահայտված,
   - բուն երկրատեղանքի զբաղեցրած տարածքի և դրա պահպանման գոտու իրադրային քարտեզ- սխեմա (համապատասխան մասշտաբով և պայմանական նշաններով), որում պետք է ներառվեն մոտակա համայնքները, հարակից ենթակառուցվածքները և այլ ճանաչելի օբյեկտներ,
5. **Տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին** – կետում ներառվում է տեքստային մաս՝ համապատասխան տեղեկատվությամբ,
6. **Պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները** – կետում ներառվում է տեքստային մաս՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի համապատասխան դրույթներին համահունչ տեղեկատվությամբ,
7. **Տվյալներ պահպանություն իրականացնող սուբյեկտի մասին** – կետում ներառվում է տեքստային մաս՝ համապատասխան տեղեկատվությամբ,
8. Անձնագրի նախագծի վերջում տեղադրվում է բնության հուշարձանի ընդհանուր և իրադրային տեսքը բնորոշող, բարձր լուծաչափով առնվազն 2 լուսանկար (բայց ոչ ավելի քան 4):

Երկրատեղանքներով ներկայացված բնության հուշարձանի դեպքում

ԱՆՁՆԱԳԻՐ

«_____» ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ

1. **Անվանումը և դասակարգումը՝**
   Տիպը՝_____, Ենթատիպը՝_____,

2. **Տեղադիրքը և աշխարհագրական կոորդինատները** – կետում ենթակետերի տեսքով ներառվում է յուրաքանչյուր երկրատեղանքի (գեոսայթի) տեղադիրքի նկարագրության վերաբերյալ տեքստային մաս և բնության հուշարձանի երկրատեղանքներից յուրաքանչյուրի պահպանման գոտու կետային կոորդինատային տվյալների աղյուսակ (կոորդինատային համակարգը WGS-84 ArmRef02),
3. **Նկարագրությունը չափագրությունը և վիճակը** - կետում ենթակետերի տեսքով ներառվում է յուրաքանչյուր երկրատեղանքի (գեոսայթի) վերաբերյալ մանրամասն նկարագրությամբ տեքստային մաս՝ ներառելով նաև երկրատեղանքի ընդհանուր և իրադրային տեսքը բնորոշող՝ բարձր լուծաչափով 2 լուսանկար,
4. **Սահմանների և պահպանման գոտու նկարագրությունը, մակերեսը, քարտեզ-հատակագիծը** – կետում ենթակետերի տեսքով ներառվում է յուրաքանչյուր երկրատեղանքի (գեոսայթի) վերաբերյալ հակիրճ տեքստային մաս՝ սահմանների և պահպանման գոտու մակերեսի վերաբերյալ, ինչպես նաև 2 քարտեզ.

- բուն երկրատեղանքի զբաղեցրած տարածքի և դրա պահպանման գոտու նկարագրությամբ քարտեզ-հատակագիծ, որի պայմանական նշաններ դաշտում պետք է ներառել նաև վերջինիս պահպանման գոտու մակերեսը արտահայտված հեկտարով,
- բուն երկրատեղանքի զբաղեցրած տարածքի և դրա պահպանման գոտու իրադրային քարտեզ- սխեմա (համապատասխան մասշտաբով և պայմանական նշաններով), որում պետք է ներառվեն մոտակա համայնքները, հարակից ենթակառուցվածքներ և այլ ճանաչելի օբյեկտներ,

5. **Տվյալներ սեփականատիրոջ և հողօգտագործողի մասին** – կետում ներառվում է տեքստային մաս՝ համապատասխան տեղեկատվությամբ,
6. **Պահպանության և օգտագործման ռեժիմի առանձնահատկությունները** – կետում ներառվում է տեքստային մաս՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի համապատասխան դրույթներին համահունչ տեղեկատվությամբ,
7. **Տվյալներ պահպանություն իրականացնող սուբյեկտի մասի** – կետում ներառվում է տեքստային մաս՝ համապատասխան տեղեկատվությամբ,

IV. <u>Աշխատանքների իրականացման տարածքը և ժամանակացույցը</u>

7. Աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, համապատասխան համայնքների վարչական սահմաններում, Հաշվետվությամբ և Աղյուսակում նկարագրված տարածքներում:

8. Սույն տեխնիկական առաջադրանքով պահանջվող աշխատանքների իրականացման ժամանակահատվածը:

8.1 Նախնական հաշվետվությունն անհրաժեշտ է ներկայացնել 2 ամսյա ժամկետում՝ սկսած պայմանգրի կնքման օրվանից,

8.2 միջանկյալ հաշվետվությունն անհրաժեշտ է ներկայացնել 5 ամսյա ժամկետում՝ սկսած պայմանագրի կնքման օրվանից,

8.3 ավարտական հաշվետվությունն անհրաժեշտ է ներկայացնել 8 ամսյա ժամկետում՝ սկսած պայմանագրի կնքման օրվանից:

V. <u>Ծառայությունների մատուցման տեխնիկական և որակական ցուցանիշներ</u>

Ակադեմիական, բուհական, բնապահպանական, բուսաբանական, աշխարհագրական, երկրաբանական, ջրաբանական, ԱՏՀ քարտեզագրման, տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծման ոլորտում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող մասնագետներով համալրված աշխատանքային խումբ,

V. <u>Այլ պահանջներ</u>

9. Սույն տեխնիկական առաջադրանքով պահանջվող քարտեզագրական տեղեկատվությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 12-ի №335-Ն հրամանի, ինչպես նաև Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2007 թվականի ապրիլի 23-ի №84-Ն հրամանով սահմանված պահանջներին համամապատասխան, կիրառելով հստակ պայմանական նշաններ:

10. Սույն տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքներում տարածական իմաստով պետք է կիրառվեն կոորդինատային տվյալներ՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով:

Հաշվետվությունը և առաջարկները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, դրանք (ներառյալ հավելվածները, «ArcGis» աշխարհատեղեկատվական համակարգով՝ «shape» ձևաչափով մշակված քարտեզագրական նյութերը և այլ հնարավոր կից նյութերը) պետք է տրամադրվեն ինչպես էլեկտրոնային այնպես էլ թղթային տարբերակով՝ (նախնական և միջանկյալ հաշվետվություններ դեպքում՝ էլեկտրոնային իսկ ավարտական հաշվետվության դեպքում՝ նաև թղթային տարբերակներով):